


891.99
7-99



ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

891.99

- 9 - 99

48

ԱԻԵՐՈՒՄՆ ԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ

ԲԱԳԻՐԱՏՈՒՆԵԱՑ

354

Կ.Ա.Մ.

ԱՍՊԱՏԱԿՈՒԹԻՒՆՆ Ք ՊԱՐՍԿԱՑ

Ֆ Հ Ա Յ Ս

Թատերգութիւն երգախառն
բաժանեալ յերկու թուական , ի Հինգ Արարու ,
յերիս Պատկերն եւ ի Մի Վեցաբան

Հ Բ Ա Տ Ա Ր Ա Կ Բ 2

Վ. Ե. Վ. ԶԱՐԴԱՐԵԱՆ ԵՊԻՔԱՐՔ



Կ. Պ Ա Լ Ի Ս

ՏՊԱԿՐՈՒԹԻՒՆ ԱՐԵԱԿ Կ. ԿԱՐՈԵԱԿ
Պապի Ալի, «ԵԳՏԱԱՐ» խան

1908



04 APR 2013

28237

ԱՆՁԻՆՔ Ա. ԹՈՒԱԿԱՆԻՆ

ՈԳԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԵՍՅՅ.

ՏՈՒԴՐԻԼ, քագաւոր Պարսից .

ԳԱԳԻԿ ԱԲԱՍԵԱՆ, քագաւոր Կարուց .

ԹԱԹՈՒԼ, իշխան Հայկազն .

ԱԲԱՍ, զօրապետ Պարսից .

ՊԱՐՄԻԿ ԶՈՐԱԿԱՆ ՄԸ .

ԾԵՐՈՒՆԻ ՔԱՀԱՆԱՅ ՄԸ .

ԱՆՁԻՆՔ Բ. ԹՈՒԱԿԱՆԻՆ

ԱԼՓԱՍԼԱՆ, քագաւոր Պարսից .

ԲԱԴԱՐԱՏ, իշխան Անիլ .

ՈՐՏԵԼՄԵԶ, զօրապետ Պարսից .

ԱՂԿԱՆ, իշխան Պարսիկ .

ՏԵՐ ՎԱՀՐԱՄ, ծեր Խահանայ .

ԶԱՐՄՈՒՀԻ, բազարատայ աղջիկը .

ԱՊՐՍՍՄ, հրամանատար զօրաց Անիլ .

ԼԵՒՈՆ, հայ պատանի .

ԳՈՒՐԳԻԿՆ, { իշխանք Հայոց

ԲԱԲԳԻՆ, { իշխանք Հայոց

ՎԵՐՍԻՎՈՐԵԱԼ ՄԸ .

ԱՂՋԻԿ ՄԸ

ԿՈՅՐ ԾԵՐՈՒՆԻ ՄԸ .

ՊԱՀՆՈՐԴ ՄԸ .

ԱԻԵՐՈՒՄՆ ԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՆՅ

Կ Ա Մ

ԱՍՊԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ՊԱՐՍԿԱՑ

Ի Հ Ա Յ Յ Ս

ԱՌԱՋԻՆ ԹՈՒԱԿԱՆ

ԱՐԱՐՈՒԱԾ Ա.

Տեսարանն է դաշտակ մը .—Ազ կողմբ բլուր մը .—Խորք աւերակ
մը .—Արեւը հորիզոննեն նոր վեր կը բաւձրանայ .

ՏԵՍԻԼ Ա.

ԳԱԳԻԿ ԱԲԱՍԵԱՆ (ձիով), ԹԱԹՈՒԼ (ետեւեն) որուն կը հետեւի
բանակ մը , տեսարանին ազ կողմեն կը մտնեն հետեւեալ պատերազ-
մական երգը երգելով :

ԵՐԳ

Ժամ է արդ փառաց
Ուղիլի խաչազանց ,
Արեամբ խղեցել
Դափնիս վարդագեղ :

Վառեալ ի զէն հուր ,
Ի սուր եւ յերկար ,
Ըզվրէծ դիւցազանց
Լուծէն օն յառաջ :

ԳԱՂԻԿԻ .— (հիւանդ եւ վիրաւոր) Ս.Հա արեւը կը ծագի, քաջ
ընկերակիցք, զփաեցէք չորս կողմէրնիդ և տեսէք թէ մեր հայրե-
նիքն ի՞նչ տիսուր տեսարաններ կ'ընծայէ մեր աչացը . արեան աղեւ-
տալի գոլորչի մ'է պատեր մեր բերրի դաշտերը . և գուարթ քա-
զաքները . հարցնենք նախնեաց զերեզմաններուն թէ այսպէս էր
առաջ Հայաստան . այնպիսի ժամանակի մը մէջ ենք որ՝ մայրեն
իրենց զաւակացը խաղալիկի տեղ դանակի կուտան, որպէս զի ար-
եան ու պատերազմի վարժունն, և հայրն ա՛յն ատեն կը ճանչէ իւր
զաւակը, երբ Պարսկի մը և թշնամիի մը արեամբը ներկուած սուր
մը իրեն ներկայացնէ :

ԹԱՅԹՈՒՆԻ .— Սրբայ քաջ, ես ալ այդ ուխտը մօրս սրբազնն
գրկացը մէջ ըրած եմ և հօրմէս ալ զբնաք շարժել սորված եմ...
թշնամունի դէմ անվեհներ զինուր մը ըլլալու համար պէտք է մօրմէ
մը՝ առողջ սորվիլ, և հօրմէ մը՝ կուուիլ :

ԳԱՂԻԿԻ .— Եւ ի՞նչպէս չատնենք այն վաս աղգը՝ որ Հայոց այն-
չափ անձնուիրութեանց և ձեռնոտութեանց փոխարէն՝ Հայուն
սրած սուրը Հայուն դէմ կը դարձնէ, երբ զայն անտերունջ գտնէ .
ահա կը տեսնենք Տուզրիլ որ քանի մը սարիէ ի վեր զօրայ նորա-
նոր գու հայուաններ զրկելով Հայաստանը կը կողովտէր կը քանդէր,
հիմա ալ ինք պարսկական բանակին զլուխն անցած կու դայ բոլո-
րովին կողովտելու և ի հիմանց կործանելու, բայց աւազ, այնչափ
սուկափ չեն թշնամունին յարձակութերը, որչափ են վաս արանց
քաս նելի մասնութիւնները, մասնութիւնն . . . ահա այս է նոդւոսվէրքը
որ զիս կը տանջէ, իսկ մարմնաց վրայի այս վէրքը որ քանի մը օր
առաջ պարսկի զօրականէ մը ընդունեցայ, պատուանչան մը կը համա-
րիմ, որ սիշեաւ իմ ձեռոքս իր սեւ հոգին սադացիլին նուիրեցի, իսկ
հայրեննեաց մասնափ մը ոզին, որ նոյնիսկ սադացիլին անընդունելի
է, որուն կրնանք յանձնել . . . քաջ ընկերք, խորշինք այս ոճիրէն .
քիչ ատենէն Տուզրիլ դէմ պիտի պատերազմինք, Հայաստանի սե-
մին վրայ սիմի կուուինք ամենաբար, եթէ կան ձեր մէջ ոնանիներ
որոնց ծանր զայ այս զիրքին մէջ պատերազմիլ, թո՞ղ ձգեն սուրեր-
նին, ևս առանց զիրենք մեղադրիլու՝ կընդունիմ իրենց հրաժարականը .

ԹԱՅԹՈՒՆԻ . Սրբայ քաջ, Հայուն սրտին մէջ պարսկական ա-
տելութենէն ուրիշ բան մի՛ փնտուեր, միթէ կա՞յ Հայ մը որ Պար-

կնն հարուածը զգացած չըլլայ, եթէ իր հօրը կամ եղրօրը վէրքը
չորցած կամ անհետացած է, Հայաստանի սատացած վէրքերը գեռ
թաց են, կը միան և մեզ կը դիտեն վրէժինդիր և արիւնուուշտ
աչքերու պէս . . . (զօրաց) զիմացէ՛ք եթէ կրնաք, հայրենասէր
որտե՛ր, այս ահեղ վէրքերը տեսնելով :

ԶՈՐԱԿԱՆՔ .— Վ. ըմբնդրութիւն :

ԳԱՂԻԿԻ .— Կ'ատէ՞ք ուրեմն Պարսկիլը :

ԶՈՐԱԿԱՆՔ .— Միշտ :

ԳԱՂԻԿԻ .— Կ'երդնո՞ւք Հայաստանի վէրքերուն վրայ որ երբէք Վ
Հ պիտի ընկրկիք :

ԶՈՐԱԿԱՆՔ .— Կ'երդնունք :

ԳԱՂԻԿԻ .— Լսէ Հայաստան ձեր ուխտը :

ԹԱՅԹՈՒՆԻ .— Ե՞նչ ձայն է այս (ամենք մժիկ կ'ընեն, նեռուեն
աղօրինի դողդոջ ձայն մը կը լսուի) :

ԳԱՂԻԿԻ .— Ռւսկից կուգայ այս ձայնը :

ԹԱՅԹՈՒՆԻ .— (ձախ կողմը ցուցելով) Սա կողմէն :

ԳԱՂԻԿԻ .— Ս.Հ. կողմը աւերակներ են (նայելով) :

ԹԱՅԹՈՒՆԻ .— Աւերակի մը վրայ խաչ մը կ'երեւի :

ԳԱՂԻԿԻ .— Բանէ է որ մասուռ մը կայ հնմ :

ԹԱՅԹՈՒՆԻ .— Եւ քահանաց մը անշառչա որ կ'աղօթէ :

ԳԱՂԻԿԻ .— Մեկի համար . . . զարնալ զինուորին հետ, երսնի
այն քահանացին որ կ'աղօթէ :

ԹԱՅԹՈՒՆԻ .— Ս.Հա ձերունի մը կ'երեւի :

ԳԱՂԻԿԻ .— Սաշուշտ աղօթող քահանան է :

ԹԱՅԹՈՒՆԻ .— Բայց երը դէպի հաս կ'ուզզէ . . . Մեր բանակին
գոլը տեսած ըլլալու է :

ԳԱՂԻԿԻ .— Եւ անոր համար կ'աղօթէ :

ԹԱՅԹՈՒՆԻ .— Ե՞նչ վեհ կ'երպարանք . եթէ ծերունի քահանաց մը
չըլլար, պիտի կարձէի թէ պատերազմի դաշտն իշնող հակայ մ'է .
աչքերը կը դազգամն, բայց սիրոը կը բարախէ :

ԳԱՂԻԿԻ .— Խնարձէկցէք իրեն (զօրեւը յարգանց շար-
ժում կ'ընեն, մինչեւո բահանան տեսարանը կը մտնէ) :

ՆՈՅՆ Ք ԵՒ ՔԱՀԱՆԱՅՆ

ՔԱՀԱՆԱՅՆ.—Ներեցէ՛ք, արի՝ զինուորներ, եթէ արկար ծերունի մը գանուելով՝ փոխանակ հայրենիքս երկաթով պաշտպանելու ձեզի պէս՝ որ զինուոր ու երիտասարդ էք, գոն կը լամ մի միայն աղօթելով . . . բայց գեռ անեղ առիւծ մ' եմ այն մասուախն մէջ՝ անոր որ զայն սրբապլծելու կը յանդգնի. հսկել եւ աղօթել, ահա ասոնք միայն բաժին մնացին ինձ իմ անկեալ հայրենիքս, հսկել հսկայի մը պէս, աղօթել քահանայի մը պէս. թէնւ կը զարնէի երբեմն ալ զինուորի մը պէս, խոկ երբ ծերացայ եւ տեսայ որ այն ծանր երկաթը ձեռքէս կիշնար, մտածեցի որ գեռ կրնայի հայրենայս ծառայել, Աստուծոյ զինուոր ըլլալ եւ աղօթել . . .

ՔԱԴԻՒԿ.—Լսէ քու ձայնդ երկինք, եւ քու հսկած միանիկ մասուոփ գուռը զարնէ որ մը աղասութիւնը, զինուոր Աստուծոյ, աղօթէ մնալի համար. գու քու խաչդ ա՛ն, մենք ալ մեր սուրբ կառնենք, գու աղօթէ՝ մենք զարնենք, գու սիրէ Աստուծոյ մենք թշնամին:

ՔԱՀԱՆԱՅՆ.—Աստուծմէ եւ հայրենիքս ետեւ կը սիրեմ այն զինուորը որ պատերազմի գաշտը կը խոյանայ, օրհնեա՛լ ըլլաք, քաշեր, որ կը ջանաք ձեր անկեալ հայրենիքը վերականգնել, գուք մի՛ լաք Հայաստանի վրայ այլ զարկէք այն բաղակը՝ որ աղէտք կը տեղայնէ անոր գլխուն. լալը ծերերուն թողուցէք, եւ այն մայրերուն՝ սրոնք իրենց զաւակաց գերեզմանները կորուսած են. ծերերուն եւ մայրերուն վրէժը առէ՛ք, քաջե՛ր, եւ քաւեցէք թշնամոյն արեւամբը մեր եկեղեցեայ՝ պալատներուն եւ գերեզմանաց եղած սրբապլծութիւնները:

ԹԱԹՈՒԿ.—Զինուորդ Աստուծոյ եւ հայրենեաց, եթէ լաւ ուշ զնենք, Հայաստանի բալոր խորչերը վրէժ կը մանչեն. Հայաստանի մէջ չը կայ մէկը՝ որուն սիրաք չը լափէ վրէժինդրութեան բոցը. մենք մեր հայրենակյաց վրէժը պիտի առնենք, պիտի պատերազմինք անոնց տեղ որք կարող չեն սուր շարժելու, նաև անոնց տեղ՝ որք կը սոսկան պատերազմի դաշտէն:

ՔԱՀԱՆԱՅՆ.—Մի՛ զանուալիք ձեր սուրբ պաշտօնը իրատարելու, եղբարք իմ. յառաջ վարէ բանակիդ, արքայ քաջ, եւ ես ութսուն-

ամնայ հասակիս մէջ այս հսկայ եւ վրէժինդիր բանակին հետ քանի մը գողղով քայլ ասնելով հրճուիմ գոնէ, քանի որ կթուառթեանս մէջ անկարով եմ ձեր փառքին մասնակցիլ:

ԹԱԹՈՒԿ.—(ձախ կողմեն նայելով) Արքա՛յ քաջ, պարուիական բանակ մը կրեւի բրին գաղաթը . . . ահ'ս . . .

ԳԱԳԻԿ.—Տուզրիլի բանակն է այն:

ՔԱՀԱՆԱՅՆ.—Պարսիկներ (ակրաները կրնելով):

ԳԱԳԻԿ.—Պատրաստ եղիք, քաջ վինակիցք իմ. ահա այն թըշնամին որուն արեանը անյագ ծարաւ մը կը զգան մեր սուրերը, նա գեռ իր ժանա սուրբ մեր անմեղ հայրենակյաց արեամբը չը ներկած դիմալրենք մեր կուրծերու սիրէ. Հայր այն է որ երկու Պարսիկ ըստապահնած չը մնոնիր:

ԹԱԹՈՒԿ.—Տամը Պարսիկ իմն են . . . կ'երդնում սրոյս վրայ:

ՔԱՀԱՆԱՅՆ.—Եթէ ես չեմ կրնար զարնել, զնէ զիանիները կը կովկասիմ:

ԳԱԳԻԿ.—Պատրաստ էք:

ԶՈՐԱԿԱՆԲ.—Վրէժ . . .

ԳԱԳԻԿ.—Ա՛ռ վրէժը ուրեմն Հայաստան. (զօրեւը սուրեւնին կը հածեն, եւ պատերազմական երգով կը մեկնին ձախ կողմեն.՝ պատկերը կը փոխուի):

ՊԱՏԿԵՐԱ

Բլուր մը. —Արքունի վրան

ՏԵՍԻԼ

ՏՈՒՂՐԻԼ, ԱԲԱՍ ԵՒ ԶՈՐՔ

ՏՈՒՂՐԻԼ.—Ա՛ռ ոչչափ մեծ հաճոյք է այս, զօրսապիտ, երբ կը մտածեմ թէ այսոր իմ նախնեաց գարսուոր վրէժները կը լուծեն՝ անտերունի Հայաստանը ոտնակիս ընելով և մերկացնելով զայն բոլոր իր փառքերէն՝ զինքերէն և գանձերէն:

ԱԲԱՍ. —Մեր մեծաղը Արքական շնորհն է այդ, տէր արքա՛յ,

որ քու հայրենեացի վրէժիմդրութեան սուրբ կ'ընէ քեզ օդնական ,
այսպիսի փառքէ զատ ոչինչ կրնար քու զօրութեանդ հետկապ ուիլ :

ՏՈՒՂՐԻԼ. — Արքա՞ի կը զուարձանայ արդեօք մածն Սքեղակ՝
երբ զինքը չը պաշտող անօրէն ժողովրդեան մը արեամբը ներ-
կուած զաշտերուն վրայ կը ախոէ իւ ճառաղայթները , և ասր գէնքն
ու զբանը աւելի անեղուպէս կը չուզացնէ թշնամեաց ահարեկ
նայուածքին . . . ի պատերապմի երեկոյին կարծես թէ թշնամեաց
արեամբը կշտայտծ և կարմրած՝ իր ասաւածային բնակարանը կը
վերադառնար , որչա՞ի զոհացաւ արդեօք երբ Սքառատրերդ և Արծու-
քազաքներուն կործանումը և ջարդը տեսաւ , և այն կոտապածները
որ Հայաստանի բալոր գաւառները սոսկումով լցուցին :

Ա/Ա.Ա. — Բայց այս տաեն մէկ սասանեան գունդ մ'էր որ Հա-
յաստանը ամէսափ տաենուվրայ ըրաւ , տէր արքայ , և երբ այժմ
դու անձամբ քաջաց բանակի մը գլուխէ անցած Հայաստան կ'ար-
շաւես , անշաշտ այն սոսկումով լցուած բոլոր բերդերը և քաղաք-
ները իրենց գոները պիտի բանան , երբ լսեն թէ գիւցազն Տուղրի՝
արեաց արքայն անեղ առիւծի մը պէս իրենց կը նայի և իրենց վրայ
կը քալէ , կարելի է որ քանի մը հայրենասիրութեամբ վասուած
աւկար բանակները յանդգնին մեզ դիմագրելու , բայց մեր քաջերուն
և փողերուն յարձակմանց չը կրնալ գիմանալ՝ պիտի փշքին փոշի-
պէս և պիտի խառնուին իրենց հայրենեաց աւերակաց աձիւնին :

ՏՈՒՂՐԻԼ. — Ես արիւնախանձ պրտիս խորը զրած եմ բոլոր Հա-
յաստան աւերակ դարձնել . Հայութիւնը ջնջել առանց աւերակաց մէջ
հեծող հայկական շունչ մը թողելու և այնպէս յաշթական , Պարսկաս-
տան իմ շքեղապանծ գան գասանալ , և անկէ զուարի նայուած քով
իմ քրայի երկրս վլատակները գիտել՝ որոց վրայ կը սասանի որարա-
կական սոսկումը , ալ զախ չունենալ Հայաստանէն՝ որ միշտ կիյայ և
կը կանգնի և կանգնած տաենը իր զրացի ազգերուն գաները կը սար-
սէ , զինքը խեղդելու համար պատեհ ասիթ մ'է իր անստերունջ վիճա-
կը . . . կուզեմ Հայութիւնը ջնջել երկրիս երեսէն . լսէ՛ երիմից բարձ-
րերէն և դու Արեւ , և ծիծաղէ՛ քու Ասաւածութիւնդ արհամարտող
ազգի մը գերեզմանին վրայ . . . աւազ որ գրեթէ ծեր եմ , եթէ չը
կրնամ կարծ կեանքիս հետ Հայաստանը վերջացնել , մտակիս հետ

ժառանգութիւն պիտի ձգեմ Ալփասլան եղբօրս՝ որ քաջեցու մէջ
քաջ է , Հայկական տանելութիւնը , եւ Հայութեան ջնջւամը , ը
թուղուլ՝ որ Հայը չորրորդ անգամ հոգի աւանձ . Հայը ամակէսի աղդ
մ'է որ իր վերքերէն քայ կը ծնի :

ԱԲԱ.Ա. — Հայն ա՛լ հոգի սանելիք չունի , մ'նչչեռ Տուղրիի հար-
ուածը զգաց իր ներքին խոյերավ պատած պախն վրայ :

ՏՈՒՂՐԻԼ. — Դեռ գնրէ զմանին մէջ ալ կ'ուզէ հեւալ :

ԱԲԱ.Ա. — Պարսկական սոսկումը կը հսկէ անսր դիտկին վրայ
ինկած անսպաց ժայռի մէջ ուզ :

ՏՈՒՂՐԻԼ. — Եւ չափանի յանէ երբեք Տուղրիի երկաթէ ձեռ-
քին տակ , երբ նամաւի հայկազանց գամբանները կը կոխիւտեմ գար-
շապարացյ տակ , մանաք որ երբեմն սասանեան գանին գէմ խորի-
տացին , երբ կը կործան եմ եկեղեցիները՝ լար խաչախատի մը տոջե-
կանթեղ կը վառեն և կ'երկրպագեն . երբ կը տեսնեմ Հայը վիրա-
ւոր և անզօր սոտքերուս տակ՝ որ կ'աղերսէ կամ կ'ապահուաց ըն-
դունայն , երբ կը տեսնեմ արեան ծով մը սրուն մէջ կը չողան Հայ-
կական արիւներանդ գրօշը կը ծածւնի . . . անյագ զուածութիւն
մը կը զգամ :

ԱԲԱ.Ա. — Եւ այս ամէնը Հայն աւերակի մը խորշը սոսկումով
կծկած կը դիտէ , երբ կը տեսնէ որ ասղթական արծիւց կարմիր
գաշտերուն վրայէն կը թեւարկէ (յանկարծ աղմուկ մը կը լսուի
խորէն) :

ՏՈՒՂՐԻԼ. — Ի՞նչ ձայներ են ասոնք :

ԱԲԱ.Ա. — Ի՞նչ կը նշանակէ այս :

ԶԱՅՆԵՐ. — Կեցցէ Հայաստան (խորէն) :

ՏՈՒՂՐԻԼ. — Ա՛հ , Հայերն են :

ԱԲԱ.Ա. — Կը զարմուխն մեր բանակին հետ :

ԶԱՅՆԵՐ. — Մա՛հ Սատանեաց (խորէն) :

ՏՈՒՂՐԻԼ. — Անօրէնամբ :

§ Ե Ա Ի Լ Պ.

ՆՈՅՆՔ ԵՒ ԶՈՐԱԿԱՆ ՄԸ

ԶՈՐԱԿԱՆ .—ՏԵՇ արքայ, Կարուց թագաւորին բանակը մեր յառաջապահ գնդին վրայ յարձակեցաւ :

ՏՈՒՂՐԻԼ .—Զօրապետ, շուտ բանակը ոսք հանէ և այդ յանդուղները խորածակէ, (Ուժելին պատերազմական փողը կը ննչէ եւ բոլոր զօրենքը կը ժողովին. Տուլքի բլրին զագարը կելլէ եւ կը դիմէ) Ահա կը զարնուին, մեղուի երան մը արծւոյ երանի մը դէմ... Հայոց բանակը քիչոր է, կը նաք պաշարել և ձեր ահեղ սուրերուն մէջ այդ յանդուղն բանակը խեղզել :

Ա.Բ.Ս. — (զօրաց) Յառաջ :

ԶՈՐՔ .—Մա՞ն Հայկազնոց (սուսերամերկ կը մեկնին) :

§ Ե Ա Ի Լ Ե.

ՏՈՒՂՐԻԼ .—(առանձին բլրոյն վրային կը դիմէ)

Ո՞վ է այն իշխանը որ մեր բանակին մէջ ինկած Պարսկաց դիմելու կը վո՞է, և չը թողուս որ մէկը իրն հարուստ մը տոյց... ահա կը տեսնեմ Կարուց թագաւորն ալ որ զօրքերը կը քաջալերէ միշտ, բայց չպատի յաջովք Արտափ բանակը կը հասնի, այն իշխանին հետ մէկը կը զարնուի, Արտափ բանակը սրդին է... կը փախչի... իշխանը ետևէն կը վազէ... ո՞հ օգնութիւն հասաւ... զարկաւ (վասնայում մը կ'ընէ) գեռ ասդին անդին կը վազէ, զո՞ն կը փնտուէ կատաղի վալրի մը պէս, երկու Հայու հնա չորս Պարսկի կիշնայ... (բայց ահա Հայոց բանակը պաշարուեցաւ...) Կարուց թագաւորը կը փախչի... չը բանուեցաւ... և այն իշխանը դեռ կը զարնէ... պիտի բանուի... ահա պաշարեցին զինքն ալ... դեռ կուզէ զարնել... Պարսկիները կը վախճան անկեց. բայց վերջապէս բանուեցաւ Արտափ ամիրային սրդին՝ այն քաջին զարնով՝ որ այնչափ սիրելի է ինձ... բանակը փախտուական Հայոց զօրքերը կը հալածէ. (դրսէն Պարսկի զօրենքը յալբուրիւն յաղթարիւն կաղազակեն) Ահա Արտա այն իշխանը զերի բանած հոս կը բերէ... (բլուրէն վար կիշնի եւ արենի վրանը կը մտնէ) :

ԶՈՐԱԿԱՆՔ .—(դրսէն) կեցցէ Տուղրիլ, կեցցէ Պարսկաստան : ՏՈՒՂՐԻԼ .—Ահ այս օրուան յաղթութեան դամինին հետ նոճի խոսնուեցաւ, արդեօք մահացո՞ւ էր Հայ իշխանին ամիրային որուոյն տուած հարուստը :

ԶՈՐՔՆԵՐ .—կեցցեն արիք, մա՞ն անարեաց (դրսէն) :

§ Ե Ա Ի Լ Զ.

ՏՈՒՂՐԻԼ, Ա.Բ.Ս. Թ.Ա.Թ.ՈՒ.Լ. (օդքալակապ),

գերիներ, ԶՈՐՔ Հայոց, ԶՈՐՔ Պարսկի

ՏՈՒՂՐԻԼ .—Ի՞նչ եղաւ Արտափ ամիրային որդին, զօրապետ :

Ա.Բ.Ս. —Վիրաւորուստ է, տէր արքայ, զինքը վրանը բերինք խնամելու համար :

ՏՈՒՂՐԻԼ .—Ինչպէս է վերքը :

Ա.Բ.Ս. —Ուսին վրայ է :

ՏՈՒՂՐԻԼ .—Այս Հայ իշխանն է զինքը զարնովը, այնպէս չէ :

Ա.Բ.Ս. —այո՞ :

ՏՈՒՂՐԻԼ .—Ես այս բլրին զատաթիւն կը դիմէի :

Թ.Ա.Թ.ՈՒ.Լ. —Ես էի :

ՏՈՒՂՐԻԼ .—Քաջ իշխան, ես քու բոլոր քաջապորտութեամցը հանգիստանե եղայ, եթէ Արտափ ամիրային որդւոյն տուած վերքը մահացու չէ, և եթէ չը մեռնի, չեմ սպաններ զքեզ, կ'ազատեմ, իսկ եթէ մեռնի, դու ալ իրեն զո՞ն պիտի ըլլաս :

Թ.Ա.Թ.ՈՒ.Լ. —Եթէ հարուստն իմն է սննդարելի է որ չմեռնի, իսկ եթէ ուրիշի մը, այդ չեմ զիտեր, հմակարնէ զարկ վիս, կամ թողրուումին՝ որ զէնքս տուած զարձեալ անտերունչ հայրենիքս պաշտպանեմ, ծանր են ինձ այս շղթաներս, երբ հայրենիքս անդին կ'ողբաց և օգնութիւն կը ինդրէ, աւելի աղէկ է որ չը լսեմ իր աղեղեց կէզ ձայնը :

ՏՈՒՂՐԻԼ .—Հայրենիքտ կ'ուղես դեռ պաշտպանել :

Թ.Ա.Թ.ՈՒ.Լ. —Ա.Յ. :

ՏՈՒՂՐԻԼ .—Որո՞ւ դէմ :

Թ.Ա.Թ.ՈՒ.Լ. —Զեղի :

ՏՈՒՂՐԻԼ .—Առանձին :

ԹԱԹՈՒԻԼ .—Սուր մը բաւական է ինձ ընկեր :

ՏՈՒՂՐԻԼ .—Ով քաջ, կարէ ալ յոյսդ հայրենեացի վերականդառութիւն :

ԹԱԹՈՒԻԼ .—Ե՞նչո՞ւ :

ՏՈՒՂՐԻԼ .—Միթէ հայրենեաց անունը կը նայ կրել մոխրակոյտ մի :

ԹԱԹՈՒԻԼ .—Զգուշացիր, ո՛վ թագաւոր, գուցէ այն աճին ին տակ դեռ կայծեր կան պահուած . . . ինչպէս գերիին սրախն վրէժը . զարհաւրելի պիտի ըլլայ գուցէ օր մը այն Հայը՝ որ վլաստակաց խորշը ու մէջ կծկած՝ առելութիւն կը մնացանէ իր թշնամնաց դէմ :

ՏՈՒՂՐԻԼ .—Այս խորշը իր գեմնղմանն է, և Պարսիկն իր մահը :

ԹԱԹՈՒԻԼ .—Հայը չը մնանիր երբեք երբ Պարսիկը զարնէ, գուցէ Աստուած զարնէ :

ՏԵՍԻԼ է.

ՆՈՅՆՔ ԵՒ ԶՈՐԱԿԱՆ ՄԸ

ԶՈՐԱԿԱՆ .—Տէր արքա՛յ, Արսուրան Ամիրային որդին մնուաւ :

ՏՈՒՂՐԻԼ .—Վերջապէս :

ԹԱԹՈՒԻԼ .—Ես չըմ, եթէ իմ զարկածս է չսպրին :

ՏՈՒՂՐԻԼ .—Պատրաստ եղի՛ր :

ԹԱԹՈՒԻԼ .—Ե՞նչ բանի :

ՏՈՒՂՐԻԼ .—Մեռնելու :

ԹԱԹՈՒԻԼ .—Գոհ եմ որ Պարսիկն սիրու ցաւ մը քանդակելով գննէ կը մեռնիմ, բայց աւելի գոհ պիտի ըլլացի եթէ սուր ի ձեռնին մեռնէի . . . ահ Հայաստան, քաղցր հայրենիք, վերջապէս քու աշխատաթեանդ արշաւոյսը չը ահսած պիտի փակեմ աչերս . բայց Հայաստանի սրախն վրայ նասած տեսայ արիւնուաշտ Պարսիկը . . . մեռնիւ . . . թողուէ Հայաստանը, մառնիւ շվթայակապ այն մարդերէն որ կատեմ և կ'ուզեմ անխնայ ջախջախնել . . . ահ սուր իմ . (կատարաբար զինքը պատող զօրաց կը նա ի) կ'ասեմ զծեզ, տուէք սուրս և առանձին կոտիմ ձեզի հետ, ահ, դուք վաս եք, կը վախնաք . . .

ՏՈՒՂՐԻԼ .—Վերջապէս :

ԹԱԹՈՒԻԼ .—Տուր հրամանով :

ՏՈՒՂՐԻԼ .—Տարեք և զարկէք զինքը հոն՝ ուր ամիրային որդին սպանուեցաւ . (զօրի կը տանին զանի) :

ԹԱԹՈՒԻԼ .—Մնաս լարեաւ Զարմուհի . . . Հայաստան(կը մեկնի) :

ՏՈՒՂՐԻԼ .—(Արտելմեզի) Զօրապետ, իր աջ թեւը կարելով Արսուրան ամիրային զրկէ միմիթարելու համար զինքը որ որդին վաս բազկէ մը մնուած չէ : (Վարազոյր կ'իջնի) :

(Վերջ Ա. արարուածին)

ՏԵՍԻԼԻ.

ՆՈՅՆ ԵՒ ԱՊՐՍԱԱ

ԱՊՐՍԱԱ. Նա և այն որ քաջ մէ՛, ո՞վ իշխանուհի:

ԶԱՐՄՈՒՀԻՀԻ. Դուռ ես, զօրապե՛տ:

ԱՊՐՍԱԱ. Մի՛ խորչիր, Զարմուհի, զօրապետէ մը՝ որ քու նըշանածիդ հետ մի և նոյն պատերազմի գաշտին վրայ կուռեցաւ և մի՛ և նոյն Պարսկական վէրքն առաւ, և եթէ թաթուլ մնաւ, ինքը գեռ ողջ է և կը սիրէ:

ԶԱՐՄՈՒՀԻՀԻ. Թաթուլ մեռած չէ ինծի համար:

ԱՊՐՍԱԱ. Պարսիկները զննքը գերի բանած չափանիցին միթէ:

ԶԱՐՄՈՒՀԻՀԻ. Նա գեռ ողջ է ինծի համար:

ԱՊՐՍԱԱ. Ո՞ւր է ուրեմն:

ԶԱՐՄՈՒՀԻՀԻ. (սիրը ցցնելով) Հոս է, կանգուն հսկայի մը ողէս, անմահ ճառագայթի մը պէս:

ԱՊՐՍԱԱ. Զարմուհի, կը ցաւկմ որ կեսմքիդ արժէքը չես գիտեր ի զուր. սէրդ ու երազներով կը մարես և գեղեցկութեանդ վարդերը որ հսկաներու նայուածքն անպամ խոնարհեցնելու կարող են, գանձ արցունքներով կը խամքես... գեղեցիկ ես, Զարմուհի՛, սիրուէ՛ր քաջէ մը, սիրէ զննւոր մը՝ որ իր սուրբն առաջ կը սիրէ քեզ:

ԶԱՐՄՈՒՀԻՀԻ. Ես սիրեցի և գեռ կը սիրեմ, զօրապե՛տ... միշանար մեր սիրոյ դրախտին թալիչ օձը ըլլալ, դու որ քու քաջագործութիւններովդ յարդելի ես ինձ, մի՛ ջանար քու սիրովդ ատելի ըլլալ... ես երինքի այն ջանալից խորանին առջեւ ուխտեցի թաթուլը սիրել, մնուած... կը յարդեմ իր միշատակը ինչաէս կը յարգէ քաջ մը իր յաղթական սրոյն ըեկորը, երբ յիշեմ դասն է իր մահը, երբ լամքաղը է իր միշատակը, զօրապետմի խուռերը ու ամպի մը պէս կը նոյզ մը երազը, ես առի մնաս բարեաւս սէրէն, առի մնաս բարեաւս աշխարհէն, և մտայ այն մնասաւանը՝ ուր յիշատակները կը փափրան... ես ալ միայն յիշատակի մը և հայրենիքի մը համար կապրիմ:

ԱՊՐՍԱԱ. Կուզես որ անիծեմ այն արեւ՝ որ երկնքին մէջ տեղ չողաց... Զարմուհի լոէ զննւորի մը, որ սուր մը և սիրտ մ'աւնի...

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒԱԿԱՆ

ԱՐԱՐՈՒԱԾ Բ.

Տեսարան է Անի բաղադրին Եւրենակողմը. = Բագարաս իշխանի ապարանը փառաւոր սրան մը. = Խորը դուռ մը. = Եւկու կողմը պատուիան :

ՏԵՍԻԼ Ա.

ԶԱՐՄՈՒՀԻ (առանձին)

Ահա Սնիի ալ զարդար իր ճիրանը անդութ Աղփառալան. ի՞նչ սոսկում է այս որ բալոր Հայաստանը պարածածկեր է. միթութիւն մը կայ բալոր անմեղ ճակտի վրայ, սեւութիւն մը՝ ամին սրտի մէջ . . . ալ ամին բան լինցաւ Հայաստանի համար, ալ կը մարդի բոլորովին Հայաստանի յուսոյ ասազին արիւներանդ լոյսը. . . Բաղրատառնեան անտերունչ վիճակին մէջ Տուղրիի պէս ճիւազ մը Հայաստանը անխնայ ստնակիս ընելէ վերջը իր սուրը կը ժառանդէ իր եղբայրը Արքայական, որ Հայաստանի հոգինը կը լափէ...

Թաթուլ, քաջդ իմ թաթուլ քեղ ալ Տուղրիի անդութ սուրը լափեց... պատերազմի արիւնոտ դաշտին վրայ, հեռու ինձնէ, ինձի մնաս բարեաւս ըսելէդ վերջը, այն տիսուր մնաս բարեաւը կեանքն ալ ինձի կրկնեց, գեռ առագաստդ չի մոսած՝ գերեզման իջար, և այն հարսանեկան քօղին տեղ՝ որ մեր զլուխները պիտի միացնէր, սգաւոր քօլ մը ճգեցիր ինձ. գոնէ գերեզմանի քար մ'ալ չը թուղցիր՝ որուն վրայ գայի երբեմն լալու... Հայաստան, այս արիւնայն ժխորին մէջ մի միայն յիմարը աղաս է ժապելու. (Ապրանի դրանը մէջ կերեւի)

սուրս գոհ է վասնզի իր տեհնը կատարուած է, կշատացած է թշնամայ արեամբը, իսկ սիրսոս դաստարկ է, որ սիրտի լեցնես զայն քու սիրուած... դան կը ինձ թէ գնայ ուրիշ մը գրնէ, մինչդեռ զիս քեզի կը քաշես և կը կաշկանդես ուկի չղթանկրով :

ԶԱՐՄՈՒԽԻՀԻ. Թո՛ղ զիս... զօրապե՞տ :

ԱՊՐՍՍՈՒ. Կը սիրեմ գըեղ :

ԶԱՐՄՈՒԽԻՀԻ. Մի կրկներ իմ ականջա այդ աղետալի բառը՝ որ դժոխոց բացին նման կացըէ զիս... եթէ դեռ սրտիս խորը յուզես սիրոյ տեղ ատելութիւն մը սիրտի զանես.

ԱՊՐՍՍՈՒ. Անդո՞ւթ...

ԶԱՐՄՈՒԽԻՀԻ. Եւրը չէ որ քու սիրտդ կը լամիէ՝ այլ դժոխացին բաց մը, որ սիրելէ աւելի կուզես քու զինակցիս սէրը և յիշատակը սրբապղծել :

ԱՊՐՍՍՈՒ. Զարմուհի...

ԶԱՐՄՈՒԽԻՀԻ. Հեռացի՛ր ինձնէ, եթէ չես ուզիր աստիլ անկի՝ զոր սիրել կը կարծես :

ԱՊՐՍՍՈՒ. Ա՛չ, Պարսկի մը դաշոյնէն աւելի սուր են և կը խոցեն սիրսոս քու խօսքերդ, Զարմուհի :

ԶԱՐՄՈՒԽԻՀԻ. Յարգէ՛ զինակցիդ :

ԱՊՐՍՍՈՒ. Ո՛չ չեմ կըսար այն բացին դիմանալ՝ որ իմ ներսս կը լամիէ եթէ ատելութեան տիսպարն ալ ըլլաս՝ դարձեալ սիրտի սիրել :

ԶԱՐՄՈՒԽԻՀԻ. Զգուշացի՛ր, զօրապե՞տ :

ԱՊՐՍՍՈՒ. Ա՛չ, մի՛ բարկանար, վասնզի աւելի գեղեցիկ և հրարսապութիւն կըլլաս... այն աչերսուդ բացերը՝ որ զիս նախասելու համար դուրս կը ցայտեն, սրտիս բոցերուն հետ կը խառնուին և աւելի ահաւոր կընեն հոս վառող հրդեհ :

ԶԱՐՄՈՒԽԻՀԻ. Տե՛ս զօրապեստ ամենքը մի՛ր քաղաքը պաշարող Պարսկաց հետ քաջարար կը պատերազմին, իսկ դո՛ւ որ քաղաքին զօրաց հրամանաստարը սիրտի ըլլաս... .

ԱՊՐՍՍՈՒ. Գաղընեցուր նսխս սրտիս պատերազմին :

ԶԱՐՄՈՒԽԻՀԻ. Վերջապէս կը հրահրես կուրծքիս տակ ատելութեան հուրը :

ԱՊՐՍՍՈՒ. Այդչափ յամառ մի՛ր ըլլար, Զարմուհի :

ԶԱՐՄՈՒԽԻՀԻ. Գնա՛ նախս պարտքդ կատարէ՛... մինչդեռ մեր Անի քալտաքը Ալփարտանի զօրքերով պաշարուած օր օրի վասնզին իւրին կապանայ, մինչդեռ տանն մարդ քաղաքին վրկութեանը համար ճիգ կը թափէ, մանուկը պաշարող բանակին քար կը նետէ, քահանան: կալօթէ, ծերը կը հոկէ, կինը իր ամուսինը կամ եղբացը կը քաջալերէ, որ յանուզն քայլ մը կը հետեւս այն սեմէն ներս՝ ուր մնակեաց վշտանար և քաղաքին կին մը կը աքնի և...

ԱՊՐՍՍՈՒ. (ընթիրելով) Աղ բաւական է :

ԶԱՐՄՈՒԽԻՀԻ. Գնա՛ պարտքդ կատարելու, մի՛ թուուր որ սուրդ յանսպափի և սրիդ մէջ սպրդի գժոխացին բոց մէւ, գնու հայրենիքդ պաշարպաննելու, ջանա՛ որ յաղթական գամիններով պատկեալ ճանապարդ գժոխոց անզնդացին սեմին չը խանարձի, նայէ՛ երկննքը՝ ուր սասպը կը փայլի, սորիծ ըրէ սիրտդ այն սասպին պէս. քայլ մ'է որ քեզի կը խօսի... օ՞ն դուրս ե՛լ այս սեմէն՝ ուր սկզբ քոզի մը տակ կը հեծէ վշտանար կին մը՝ որուն սրտին մէջ հայրենեաց յոյն սննդամ կը մարփ, և զու աղետալի սիրոյ մը հետքը կը վնասուես ընդունայն և իս ջանառ ընտան մն ընել, սերաշըուժ մը... .

ԱՊՐՍՍՈՒ. Ա՛չ, ո՛չ, Զարմուհի... այլ ո՞վ պիտի մարէ սրտիս այս հուրը՝ որ միշտ կը լամիէ զիս:

ԶԱՐՄՈՒԽԻՀԻ. Սրցանքս՝ զոր ջերմաջերմ կը թափեմ գետ՝ իմ Կաշանածիս սննեն կերեզմանին վրայ :

ԱՊՐՍՍՈՒ. Ա՛չ, այդ չ' կարող :

ԶԱՐՄՈՒԽԻՀԻ. Կիրճ չունիս ուրեմն :

ԱՊՐՍՍՈՒ. (ոսքն իյնալով) Միայն սէր կարուի մէջ կարուի մէջ :

ԶԱՐՄՈՒԽԻՀԻ. Ալլահամմա՛մ:

ԱՊՐՍՍՈՒ. Զարմուհի :

ԶԱՐՄՈՒԽԻՀԻ. Մէկը կուզայ :

ԱՊՐՍՍՈՒ. (ոսքն ելնելով) Ո՞վ :

ԶԱՐՄՈՒԽԻՀԻ. Հայրու:

ԱՊՐՍՍՈՒ. Վերջին խօսք մը ուրեմն... (Զարմուհի սպաննական նայուած մը կուղը) Մնաս բարեաւ. (կը մեկնի):

ԶԱՐՄՈՒԽԻՀԻ. (մինուկ) Դուզէ որ առեմ զինքը :



ՏԵՍԻԼ Գ.

ԶԱՐՄՈՒՀԵԿ ԵՒ ԲԱԳԱՐԱՏ

ԲԱԳԱՐԱՏ. Աստուած իմ:

ԶՈՐՄՈՒՀԵԿ. Խնչու խռաված ես, հայր իմ, ի՞նչ կայ, միթէ
քաղաքնա վաճանքի մէջ է . . . խօսե՛ . . .

ԲԱԳԱՐԱՏ. Զարմուհեկ Աղկան իշխանը որ միշտ ձեւանաւուա-
թիւններ կընէր մեզ, մագաղաթի մը վրայ անսնց խորհարդները զբ-
րելավ՝ գաղանի մեր պարապէն ներա կը նետէր, հիմա ալ նոյնպէն
կը յայտնէ թէ Պարսիկները ահապին բարան մը բերուծ են՝ որ 50—
60 մոր ծանրութեամբ քար կը նետէ եղեր, և մեր պարփակներն ա-
նով պիտի քարելուն . . . և այն բարանը չը վնասաւելու համար բամ-
պակի հակերով պատասխանած են:

ԶՈՐՄՈՒՀԵԿ. Միթէ տառը հետեւանքը շատ ծանր կընած ըլլալ:

ԲԱԳԱՐԱՏ. Ի՞նչ կրաս աղջիկու . . . երեակայէ՛ մագամ մը, վամ-
սան մար ծանրութեամբ քար մը . . . եթէ պարապին զայնէ . . .

ԶՈՐՄՈՒՀԵԿ. Մի՛ յաւանատիր, հայր իմ:

ԲԱԳԱՐԱՏ. Եւ բնչ յայ կընամ նշանքել . . . բալոր քաղաքին
մէջ քարուղ կարդացուցի և խնայուցի թէ ալ որ յաջողի այն բարանն
այլեւ, զինքը մածամնէ չնորհքներով պիտի վարձասորեմ, և եթէ
ինքը Պարագի կատաղաթիւնն ալ զո՞ւ ըլլայ բարանը մօխիր վարձնելէ
վերջ, իր բարոր ընտանիքը երջանիկ վիճակի մը պիտի հասցեւած:

ԶՈՐՄՈՒՀԵԿ. Աղէկ խորհեր ես, հայր իմ, անշուշտ կը զբա-
նուի քոշ մէկը, որ այդ՝ ձեւնարկը զլախի հանէ:

ԲԱԳԱՐԱՏ. Տեսնենք . . . եթէ այս գործին մէջ ալ յաջողինք,
ալ քաղաքին գիմադրութիւնն վրայ չեմ կասկածիր, մինչդեռ Պար-
սիկներն ալ մեծ կորաւաս ընելուան համար շատ հաւանական է որ
քաղաքին առամնը վրայ բոլորավին յուսանաւած մնենք . . . բայց
եթէ այսպիսի գործ մը ստուճնուղ քաջապիտ մէկը չը զանուի,
խիստ աղեւալի պիտի ըլլայ մեր վիճակը. մտածէ՛ մէկ մը որ երբ
անգութ Պարսիկն իր սեւ ոտքը քաղաքին սիմին վրայ զնէ, Անի
Բաղրամանեաց այս զուող, յաղթական և փառաւոր մայրաքաղա-
քը՝ որ այնչափ քաջ որբան հանդիսացած է, Հայոց ազգին վեր-

շնու տկար մասպարփին ահապին գերեզմանը պիտի ըլլալ . . . միխու-
կոյս մը . . . Աստուած իմ:

ԶՈՐՄՈՒՀԵԿ. Մի՛ յաւանատիր, հայր իմ, գետ չէ մարտ-
հայրենասիրութեան վեւմ կաթը հապաւծեալ հայոց պատերան մէջ,
թէպէտ բոլոր Հայաստանի հազին վրայ հայոց արեամբրը չը կարմած
ափ մէ անբիթ հող չը մնաց, բայց գետ Հայոց խաւագանած որտին
մէկ անկիւնը նուիրական և անբիթ խորշ մը կայ ուր կը հրանի
հայրենեաց հուրը:

ԲԱԳԱՐԱՏ. Իսկ մասնչութիւնը . . . այդ չեռ բակը, եթէ Վետա-
Սարդիսի պէս փոռամնի և ուրացող ճիւաղ մը ըլլալ, հիմա Անի
զաւրդի էր, թագաւնի էր, Յապրաւանի թափաւոր մը կար իր
թափաւր գահին վրայ, Պաղիկ՝ որ հիմա օսարաւթեան և պանդիս-
տավթեան մէջ կը հայի ու կը մաշի . . . մերկացացին Հայաստանի իր
թագին և փառքերէն, և արդ սպալի ու անշուշտ գաղաղ մը կը
պատրաստեն անոր հաւաք:

ԶՈՐՄՈՒՀԵԿ. Բրաւանքը ունիս, հայր իմ . . . ո՞հ երանի թէ ես
ալ փօխանտեկ տկար և վախկան կին մը ըլլալու՝ հոզի վրոց պատկաղ
և սուրին կրթնազ վինաոր մը ըլլալի և թուր լոկ լոկեր առած խո-
յանայի արծւաց մը պէս պատերազմի գաշաք, թափէի թշնամուց ու
կառապներ, ապաստթիւն պառազի և զարնէի իսկ երր սույս խոր-
տակէր, անոր բեկորին վրայ ինկած ապի շանչու հայրենեաց խոց-
եալ սրտին վրայ: Աւազ, երր վինաորի մը զնէ բախտակիցը պիտի
ըլլայի, բախտը իսկց զայն ինձնէ, թող չը տուառ որ զնէ ինքը
պատերազմի գաշաէն՝ գարձած տուենը ճակատին քրախնքը՝ պրէի և
վէրքը կապէի:

ԲԱԳԱՐԱՏ. Թաթուուլ:

ԶՈՐՄՈՒՀԵԿ. Այս՛ (կուլայ):

ԲԱԳԱՐԱՏ. Մի՛ լոր Զարմուհեկ, յանցանք է Հայրենեաց նահա-
տակի մը վրայ լալը:

ԶՈՐՄՈՒՀԵԿ. Գոնէ իր վերջին մնաս բարովը լոեի իր բերնէն,
համրութէի իր վերքը, սրտի վրայ տար իր վերջին շանչը փիփու-
նակ անարգ թշնամուց զէմ ստուկիս ըլլալու, զնէ գերեզման մը
ունենալ՝ որ արցանքովն թրջէի:

ԲԱԳԱՐԱՏ. Միւլար անոր վրայ մինչդեռ հայրենիք ժաղացաւ .
միմրայն յարգէ իր յիշատակը :

ԶԱՐՄՈՒԽԻ. Միշտ պիտի յարգեմ, հայր իմ:

ԲԱԳԱՐԱՏ. Աղջիկս, գոցենք թախովի փառաւոր գերեզմանը ,
և չը խառնենք իր գիւղաղնակն քունը և մեր արգի անորոշ կա-
ցութեանը վրայ խորհնիք, ապագային ևս պիտի ըլլամ պատասխա-
նասու Անիի վերականգմանը կամ կործանմանը, մեր պարապին զար-
նող այս ահապին քարը խոր վերք մը պիտի բանայ սրախ մէջ . . .
արդէն այս տարածայնութիւնը մնջ յուզմունք պատճառած է քա-
ղաքին մէջ :

ԶԱՐՄՈՒԽԻ. Յուսու, հայր իմ:

ԲԱԳԱՐԱՏ. Դիւրին է յաւսալ :

ԶԱՐՄՈՒԽԻ. Անշաշտ հնարք մը կը գանուի . . . մինչդէս որ
Պարսից անշափի յանդադն ջանքերն ի գերե համող հնարքներ ե-
նդան :

ԲԱԳԱՐԱՏ. Շատ անգամ այն Պարսիկ իշխանն էր օդնով :

ԶԱՐՄՈՒԽԻ. Անգամ մ'ալ Աստուած կ'օգնէ :

ՏԵՍԻԼ Պ.

ՆՈՅՆՔ ԵՒ S. ՎԱՀՐԱՄ

S. ՎԱՀՐԱՄ. Այս, Աստուած :

ԲԱԳԱՐԱՏ. Ի՞նչ ըրիր, տէր հայր :

S. ՎԱՀՐԱՄ. Ի՞նչ կրնէ ծեր քահանայ մը, ժողովուրդը խրա-
խուսել և աղօթել :

ԲԱԳԱՐԱՏ. Ի՞նչ վիճակի մէջ է ժողովուրդը :

S. ՎԱՀՐԱՄ. Յուսանատ վիճակի մը մէջ էր, բայց ևս քաջա-
լերեցի վերենք իմ տկար ձայնալս երկինք յուցնելով ևս Ամինակա-
լեն բարութիւնը յելլեղեղեղով՝ որ իր բարկութիւնը մեր վրայ չը թա-
փէ . . . ի՞նչ յանդադն փափաք, կ'աղենք որ Աստուած կապէ Հայուն
վերքը որ Հայր Հայուն կատայ :

ԶԱՐՄՈՒԽԻ. Այսպէս է :

ԲԱԳԱՐԱՏ. Ուրեմն կը յաւսահատուի՛ս մեր կացութեանը վրայ :

S. ՎԱՀՐԱՄ. Բնաւ . . . յոյսը գերեզմանին դրանը մէջ անգամ
կը չալայ . . . յոյով Աստուածոյ ժավան է . . . կը զթայ Աստուած
երբ երկինքի համապատկերը կը անմնէ մարդուս վրայ՝ որ արցունք-
ներով չալացող պայծառ աշքը իրեն կը նայի յուսալից . . . վայ մեղի
որ երբ մ'ար քաղաքին մէջ մասնիչ մը կը չնչէ և կը խոկայ ան-
գունդը նայող սեւ ժայռի մը պէս :

ԲԱԳԱՐԱՏ. Ի՞նչ բնելու է ուրեմն :

S. ՎԱՀՐԱՄ. Պէտք է նզօրի մը պէս ջանալ և խրախուսել
տկարը . . . ասով կրնանք թշնամեաց յանդադն ջանքերուն զի-
մագրել այս է մեր բնելիքը, եթէ գետ թշնամն յաղթահակէ Աս-
տուածոյ կամքն է այն, զացէ ալ շատ չնչեց և փառասոյւսեցան
երկրիս երեսը Հայր, և գերագոյնէ կամքը կուզէ որ սորա հակայ և
փառաւոր անունը թագուի իր երկրին հայակապ չէնքերուն վլատա-
կն ներքեւ, բնչպէս ուրիշ աղքեր և երկիններ փշրեցան այն Աս-
տուածացին կամաց անդիմաղրելի փոթորկին առջեւ :

ԲԱԳԱՐԱՏ. Ահ սուկափ է այդ :

ԶԱՐՄՈՒԽԻ. Ի՞նչ ահապին անդունդ մը պէտք է Հայր թա-
ղելու համար :

S. ՎԱՀՐԱՄ. Աստուածոյ ափ մը հոգը կը բաւէ, Զարմուխի :

ԲԱԳԱՐԱՏ. Հայր գետ չառ կրնագուն կը կենար եթէ երակացը
մէջ շրջան չառներ իր հայկական արեանը խառնուած այն թոյնը որ
չեմ զիսեր ու ակից ժառանգած է . . . իր ներքին վերքերը Հա-
յասանուր օրհնաւակն ըրին և ոչ թէ թշնամեաց արտաքին հարուած-
ները. կը զարմանամ թէ ինչպէս Հայաստան գետ կը չնչէ կանգան
և գաղգռաւն և իր փեռեկանալ ձակտին վրայ գետ անչինչ կը կը-
ազգութեան դրօշմը . . . Հայաստանի վլատակաց մէջէն միշտ
Հայուն զլամիններ կը վիթին նեազնեէ :

S. ՎԱՀՐԱՄ. Ազատաթեան արմատ ձգած ծաղիկներն են ա-
նոնք, այն ազատութեանը որ Հայկ իր նեամլը նեացուց ու ասպա-
ծեց և փառամնկ արացողը յանդգնեցան զայն իրմանը որտին մէջ
խեղդել :

ԶԱՐՄՈՒԽԻ. Ահէծք անոնց :

S. ՎԱՀՐԱՄ. Դժողով իրենց հետ կը խօսի, անմնք որ երկրի
վրայ երկաթէ շղթայ անցուցին ուրիշն իրենք բոցեղէն շղթայ կը

ժառանգեն հոն՝ ուր արդարութիւնը կորստայ իր տաճենքն ահեղ ձայնովք :

ԲԱԳԱՐԱՏ. Միայն այն վասերը իցիս թէ իշխացին Աստոծոյ շանթէն փախանակ հայրենիքն ալ թաւալելու :

Տ. ՎԱՀՐԱՄ. Հայտաստն մնուց զանոնք :

ԲԱԳԱՐԱՏ. Շշմբիլու է :

ԶՈՐՄՈՒՀԻ. (պատուհանին նալելով) Հայր իմ քաղաքին մէջ միորը հետպէտէ կը բարձրանայ, և ժողովուրդը աղեկածեալ ծովու պէս կը տաստանի :

ԲԱԳԱՐԱՏ. Արդիօք պիտի ներկայանայ ինձ քաջ մը խստաշնոր համար թէ ինքը պատրաստ է այն ահազին բարձր աղելու ձևանարկել :

Տ. ՎԱՀՐԱՄ. Մանազկերտցիք ալ Մանազկերտի առջև Պարսից մէկ ահազին բարձր ամրեցին հարքով մը Տուղրիկ արշաւառաց ժամանակ, բայց չեմ յուսոր որ պարսիկք՝ այս դործը դիւրութեամբ յաջողցնել տար մնիք :

ԲԱԳԱՐԱՏ. Եթէ ձեւնարկովը մանք աչքը առնէ զօրքերը իրենց վրանը քաշուած ժաման կրնոց դեռ Պարսիկները իր վրայ շրաբնակ այն ահազին բարձր հրոյ ճարակ ընել և գուցե ձեւնքնան ալ փախչիլ :

ԶՈՐՄՈՒՀԻ. Չվկա՞ արդիօք այդպիտի քաջասիրու և հայրենաւելու մէկը :

ՏԵՍՆՔ ԵՒ ԼԵՒՈՆ

ԼԵՒՈՆ. Վեհանգն իշխոն :

ԲԱԳԱՐԱՏ. Ի՞նչ կը ինդրես, ո՞վ պատանի :

ԼԵՒՈՆ. Դու քաղաքացոյ մէջ քարոզ հանեցիր գանելու համար մէկը՝ որ յանդզի ի սէր հայրենաց՝ Պարսից միը քազաքին զիմոց կանգնած և մէծ վասեդ սպասնացով այն ահազին բարձրն ացրել :

ԲԱԳԱՐԱՏ. Այո՛, և ձեւնարկովին մնծումն չնորհեր խստացոյ, և եթէ ինքը մեռնի՝ իր լիսանիաց :

ԼԵՒՈՆ. Ես չնորհեր չեմ ուզեր, և ոչ ալ ընասիք ունիմ : ԲԱԳԱՐԱՏ. Դու :

ԶՈՐՄՈՒՀԻ. Ասուած իմ :

Տ. ՎԱՀՐԱՄ. Քաջամիրու աղայ :

ԼԵՒՈՆ. Այս՛, ես որ որք եմ, ո՞չ հայք, ո՞չ մայք՝ և ո՞չ եղբայր ունիմ, այլ միայն թշուառ հայրենիք մը, ահա այն է հայք, մայքու ու եղբայրս, հայրենիք մը ունիմ միայն՝ որ կը սիրեմ, և զ յն սիրելու համար կզգամ որ պէտք է մեռնիլ, մեռնիլ, խանճել իմ երակոցս արինչը այն գիւղաղանց թափած արևան հեղեղներուն՝ որք իրենց աշխարհն քշեցին տարին զերութեան ահազին շղթաները և մնդանդը թափեցին :

Տ. ՎԱՀՐԱՄ. Եկու՛ր կրկեմ զքեզ որախ վրայ, ո՞վ նորասի դիւցագն :

ԶՈՐՄՈՒՀԻ. Հայտաստնի հրեշտակը

ԲԱԳԱՐԱՏ. Ասիք յաղթական բուրզը :

Տ. ՎԱՀՐԱՄ. Պիտի կրնաս յաջողիլ :

ԼԵՒՈՆ. Եթէ Հայտաստն զես պիտի տարի :

ԲԱԳԱՐԱՏ. Կազրի Հայտաստն եթէ քեզի պէս քաջեր ըլլան :

Տ. ՎԱՀՐԱՄ. Երանի քեզի որ աղդ նորասի հասակիդ մէջ հայրենաւեց զրկարար մը կը հանդիսանաս :

ԶՈՐՄՈՒՀԻ. Ահ, հայրենասիրութիւն ի՞նչ զեղեցիկ ճառագայթ մէկ վիճ և մնանդ ճակոսի մը վրայ. (ահազին բանիքին մը կը լսուի խորեն) Ասուած իմ :

ԲԱԳԱՐԱՏ. Ահա առաջին հորուածը :

Տ. ՎԱՀՐԱՄ. Սիրու առ քաջամիրու աղայ :

ԼԵՒՈՆ. Բանի մը պէտք չտնիմ . . . օրհնութիւնը, զինուորդ Ասուածոյ :

Տ. ՎԱՀՐԱՄ. Օրհնուալ ըլլաս զտուակս (ձեռները գլխուն կը դնի):

ԲԱԳԱՐԱՏ. Պատրաստ ըլլանը (Տ. Վահանիք) գու զնաց եկեղեցի, տէ՛ր հայք ողջ թելու, ես ալ երթամ քաղաքացիքը քաջարելու: (Զարմանիթին) իսկ դու :

ԶՈՐՄՈՒՀԻ. Հայրենակացոց վերքերը կողելու (ամենի կը մեկնին.—պատկեր կը փոխու) :

ՊԱՏԿԵՐ Բ.

Անիկ պարագաց առջեւ դաշտակ մը . և սաւահին խորը բարանք .—
Պարսպին վրայ խոց մը կ'երեւին :

ՏԵՍԻԼ Զ.

Ա.Ի.ՓՈ.ՍԼ.Ա.Ն , ԱԲՏԵԼՄԵԶ ԵԽ ԶՕԲՔ

Ա.Ի.ՓՈ.ՍԼ.Ա.Ն . Ահա մեր առաջին հարուստը պարապին վրայ ահա-
զին վերք մը բացաւ , թա՛ղ անհնան Անիցիք , և իրենց փրկութեանը
վրայ յուսահատոծ անձնատուր բլլան առանց Պարսկաց յաղթական
ճականը քրանելու :

ՈՐՏԵԼՄԵԶ . Այսչափը յուսական է վերենք ահարեկելու , ար-
քայդ վեհափառ ... քիչ մը եաքը պատողամատոր մը կը փութոց
հաշտութեան պայմաններ առաջարկել :

Ա.Ի.ՓՈ.ՍԼ.Ա.Ն . — Բայց ես երբէք չպատր զիմամ իրենց վրայ , այս-
չափ առեն իմ զօրութեանն ընդունայն դիմագրենուն համար , ես
այսչափ ժամանակի մէջ հարիւր քաղաք կապտած՝ քանդած և ջար-
դած էի ... Մանազկերտի և Պարսկաց վրէժը պիտի առնեմ բարոր
Հայաստան աւերակ դարձնելով , այսպէս ընդունեցի Պարսկաց թա-
գը իմ դիւցան Տուղրի և վարժութէս . իր ցուրտ գերեզմաննեն և արե-
ւն վրայ այս ահանոր ուխտը կրկնեցի , չնչել Հայաստանը :

ՈՐՏԵԼՄԵԶ . Եւ պիտի քաջողութ , աէ՛ր Ս.Պ.Ք.այ :

Ա.Ի.ՓՈ.ՍԼ.Ա.Ն . Կ'երդնում ահանոր սրոյս վրայ :

ՈՐՏԵԼՄԵԶ . Թու մէկ հրամանդ կը բառէ՝ Հայաստանի Հայերը
ասրտելու :

Ա.Ի.ՓՈ.ՍԼ.Ա.Ն . Թող Հայաստանի աւերակները կրկնեն սուկհումք
սուրէծն Արխալամի անուննը՝ ուր սրասոց . այս է այս յշտառ-
կը՝ որ հոս պիտի թուլում և Հայկական կմախք մը իմ չքերպարանծ
գահն պատուանդան :

ՈՐՏԵԼՄԵԶ . Տէր արքայ , քեզ երախտապարա պիտի բլլոց Պար-
սկանի պատգայն :

Ա.Ի.ՓՈ.ՍԼ.Ա.Ն . (զօրաց) Դուք ալ գացէք , քաջիր , ձեր վրաննե-
րուն մէջ հանգելու , և պատրաստ եղէք քիչ առենէն այս զուող

քաղաքը կործանելու և կողովուելու ... (զօրեց կը մեկնին) քաջ-
նուուկմնազ , մենք ալ երթանոք համգչելու , այս հորտառածք բառական
է (կը մեկնին) :

ՏԵՍԻԼ Է.

Ա.Պ.ՀԱՅ (առանձին)

Ահա Անիկ պարսպին վրայ խոր վերք մը , վերջապէս ովտի տա-
պալի նա : Ավատակն կը կատակի՝ կարծելով որ իր բաղրու հնարքները
քաղաքացւոց նախառաւութեամբը կը փաման , չգիտեր որ իր բա-
նակնին մէջ մասնիչ մը կայ որ իր բաղրու խորհուրդները զաղագապալի
քաղաքացւոց կը հազարդէ ... ահա Զարմէնի , գեղանի աղջիկ , դո-
ւու որ վիա այս մասնաւթիւնները գործադրելու կը զրգեն ... անիծ-
եալ բլլաց այս օրը՝ որ քեզ անսոյ ազգ պարսպին վրայ և սիրեցի .
ահա կը սիրեմ և կ'ամուժահարիմ , կը մասնեմ և կը կատղիմ . անիծ-
եալ սեր ... Պարսիկ մը Հայունի մը կը սիրէ և անսոր սիրուն իր
հայրենիքը մասնէ ... բայց սէրն ամեն բանի կը յաղթէ , պէտք է
տեսնել զինքը (կը մեկնին) :

(Պարսպին վրայ Անտառելիք զլուխներ կ'երեւին) :

ՆԵՐՍԻՆ . Պատերազմ , պատերազմ :

ՏԵՍԻԼ Ը.

ԼԵՒՈՒ

(Մինակ կ'երեւի , ձեւոք նիզակ մը՝ ուռուն ծայրը մազադոր մը
կը սարդի) :

ԼԵՒՈՒ. պատազամանւոր , պատազամանւոր (բաբանին կուզէ մօտենալ)
ՊԱՐՍԻԿԻՔ . (դրսնաբանն պիտի ացրէ , բարանն . (մեծ աղմուկ) :
ՀԱՅԵՐ . (պարսպին վրայն) Պախիր , Պարսիկները կը համնի :

ԼԵՒՈՒ . (որ դիւրափառ նեղուկ մը բաբանին վրայրափած էր,
բաբանը կախի բանիկի , Լեւու կուզէ վախճի , Պարսիկները ամեն
կումն զինքը կը պահան (ն) Պարսկաց ձեւոք չինար . կը դա-
նայ շուտով և յանկած բաբանին բոցին մէջ կը նետափ եւ այնե-
րը երկին յանելով կաղապակի) Կեցցէ Հայրենիք : (Պարսիկները
որ զինքը պահառած էին ավեած եւ կալծակ ահա . կը մենա .
վարագոր կիշնի) :

Վ.ԵՐՋ Բ. Արարուածին

ԱՐԱՐԱԿԱՆ Գ.

Տեսարանն է Բագարատայ ապարանին մեջ կանարակապ եւ սիրազարդ սրահ մը . պատճե կախուած գիներ եւ զրահներ .—տեսարանը մուք է .

§ Ե Ս Ի Լ Ա.

ԲԱԳԱՐԱՏ ԵՒ Տ. ՎԱՀՐԱՄ

Տ. ՎԱՀՐԱՄ. Ի՞նչ կը մտածես, իշխան :

ԲԱԳԱՐԱՏ. Բարձոնը և միանգամայն ինքնինքը այրող հայրենակը պատճեսոյն վրայ կերպարացած է տշու . . . ան, որչափ սրտաշար և վսեմ էր այն վարկեամբ՝ երբ նու Հայրենիք գոչելով բացին մէջ նետառեցաւ :

Տ. ՎԱՀՐԱՄ. Յիրաւի, զարմանալի էր իր արփասրտութիւնը . պիոծ Պարսից ձեռք չինալու . համար ինքնինքը կըսկը նետեց, և վինքը շրջապատող Պարսից այն կատաղ խումբը շանթահար մնաց, երբ այն հայրենասիրական վսեմ տեսարանը անուած . Ալփասկան Անին պաշարենք ի վեր է՝ որ շատ յանդուղն քաջադործութիւններ անուած . Անիցւոց կողմանէ :

ԲԱԳԱՐԱՏ. Եւ դեռ մինչեւ հիմա Անին իր ճամկերաւն տակ առնելէ յուստանոտած ք մենիսիր, և մինչեւ ցեղը այսպիսի սրտատանջ պիճակի մը մէջ պիտի տաստանիք :

Տ. ՎԱՀՐԱՄ. Ի՞նչու սրտատանջ ըլլայ մեր վիճակը . երբ մեր յոյսը ցամքեցնող բարձոն մը կար այն ալ մոխիր դարձաւ՝ քաջի մը կըսկըլու :

ԲԱԳԱՐԱՏ. Եւ միթէ դեռ նորանոր կատաղի և յանգուղն փորձերու չի պիտի ձեռնարկեն :

Տ. ՎԱՀՐԱՄ. Թո՛ղ արդպէս ըլլայ մնաք ինչուան հիմա ի՞նչ որ ըրինք, ասկէց ետքն ալ նոյնը կընենք դարձեալ, արփութիւն և միութիւն, դարձեալ կը կընեմ, եթէ մեր քաղաքին մէջ մտանիշ մը չը խուկար կըսացինք նորասակել այսպէս Ալփասկանի երկաթէ կամքը :

ԲԱԳԱՐԱՏ. Այս անդամ Պարսիկն է կարողը, նու կընէ մտանութիւնը :

Տ. ՎԱՀՐԱՄ. Աղկան իշխանը :

ԲԱԳԱՐԱՏ. Կը զարմանամ այդ իշխանին մեր վրայ ցցուցած համակարգան ցոցիրաւն և անձնութիւննոց վրայ . ես այսպէս կը կարծեմ թէ գաղտնիք մը կայ ծածկաւած իր գործոցը տակ . . . կամ զուցէ բան մը կանկապէ մեղնէ :

Տ. ՎԱՀՐԱՄ. Ի՞նչ ամփակութիւն կրնայ տնենալ, եթէ ձըշմարիտ Պարսիկ մէկ, քանի որ Պարսիկ մը երջանկութիւնը իր խողոված Հայոց թուոյն քանակութենէն կախում ունի, ես այսպէս կը կարծեմ թէ այս իշխանը պարզապէս կը դթայ մեր դառն կացութեանը վրայ, նու զուցէ Պարսիկաստանի անապատներաւն մէջ գոհար մէկ :

ԲԱԳԱՐԱՏ. Գրեթէ նու եղաւ Անիի ազատաբարը :

Տ. ՎԱՀՐԱՄ. Ճշմարիտ է :

ԲԱԳԱՐԱՏ. Եթէ դեռ Պարսիկը բարձոնին այրելուն վրայ կատագած ուրիշ ձեռնարկի մը խօրհուրդն բնին, մեր բարեաթիր իշխանը սովորականին պէս զազմանի կերպավ անչուշտ կիմացնէ մեզի :

Տ. ՎԱՀՐԱՄ. Այլ դեռ ի՞նչ մեաց գործադրելու . Պարսից համար, ինչ որ կողեն թող բնին, բաւական է որ մենք միաբան և արթուն՝ հարուածը ձեռքիրնիւ հակենք այն վիշտպին դիմուն վրայ . . . Ավ երկինք, մենք կաղօթենք և կը զարնենք այս է մեր զօրաւթիւնը զու ալ օգնէ որ Հայութեան վերջն արձանն ալ տապալի թշնամիաց առջեւ :

§ Ե Ս Ի Լ Բ .

ՆԱՅՆՔ ԵՒ ՊԱՀՆՈՐԴԻ

